ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

№ 01/08.2/900-15
«17» 02 2015 թ

«ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան

Ի պատասխան ՀՀ Նախագահին ուղղված Ձեր 2014թ. դեկտեմբերի 25-ի N2296 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

Երկրի ֆինանսատնտեսական զարգացումները բազմաբնույթ են և պահանջում են ինչպես երկարաժամկետ, այնպես էլ՝ կարճաժամկետ և օպերատիվ որոշումների կայացում: Դրանք իրականացվում են տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի հետ սերտ համագործակցությամբ: Տնտեսական զարգացումներին արձագանքելու, ՀՀ կառավարության ծրագրային և ռազմավարական փաստաթղթերն իրականացնելու, որոշումների կայացման գործընթացները կազմակերպելու նպատակով ներկայումս գործում են տարբեր հարթակներ և ոլորտային խորհուրդներ՝ պետական, մասնավոր և հասարակական հատվածների ներգրավվածությամբ: Անհրաժեշտության դեպքում դրանց արդյունքները քննարկվում են նաև ՀՀ նախագահի մոտ: Նշվածի համար վառ օրինակներ կարող են ծառայել ՀՀ վարչապետի գլխավորությամբ գործող ՓՄՁ զարգացման խորհուրդը՝ ստեղծված ՓՄՁ զարգացման խոչընդոտների արագ վերացման նպատակով, Գործարարության աջակցման խորհուրդը՝ ձևավորված գործարարության աջակցման, ներդրումների խթանման և վարչարարական խոչընդոտների վերացման նպատակով, ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդը՝ ստեղծված արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության իրականացման աշխատանքների համակարգման և արդյունքների քննարկման

նպատակով, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը՝ ստեղծված ոլորտի զարգացմանը աջակցելու նպատակով և այլն: Ընդ որում, դրանց մի մասը ստեղծվել են ՀՀ Նախագահի հրամանագրերով:

Միաժամանակ, վերջին ժամանակահատվածում արժույթի հետ կապված Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում իրավիճակի կարգավորման հետ կապված խնդիրները քննարկելու և օպերատիվ արձագանքելու նպատակով ՀՀ վարչապետի 2014թ. դեկտեմբերի 17-ի N1272-Ա որոշմամբ ստեղծվեց աշխատանքային խումբ՝ ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի ղեկավարությամբ: Աշխատանքային խմբի օպերատիվ, ամենօրյա ռեժիմով գործունեության արդյունքները քննարկվեցին ինչպես ՀՀ վարչապետի, այնպես էլ՝ ՀՀ Նախագահի մակարդակով:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք, որ առկա ձևաչափերով գործող հարթակները շարունակում են պահանջված մնալ, իսկ նոր ձևավորումների վերաբերյալ մոտեցումներն առաջարկում ենք քննարկել դրանց գործունեության արդյունավետության առավել բարձրացման հնարավորությունների օգտագործման համատեքստում:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

Կատարող՝ Արտակ Չիլինգարյան
597123